Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

373
C-21

Ch81

K 1436

Sv 1

№ ~~112~~

~~2058~~

~~№ 838~~

373
Շ-21

ԲԹԻՇԿ ՍԻՄԷՈՆ ՇԱՀ-ԵՂԶԱՐԵԱՆՑ

ՄԻ ՏԵՂԵԿԱԳՐԻ ԱՌԹԻՒ

(«Համառօտ տեղեկագիր Հոգաբարձութեանս եռամեայ գործունէութեան Երևանայ Հայոց Թեմական (Հոգևոր?) Դպրանոցի ուսումնական և տնտեսական վիճակի մասին՝ սկսած 1897–1900 ուս. ամի» (կազմեց) «Գանձապահ - Հոգաբարձու՝ Գ. Անտօնեան»

«Եւ դու քարոզեա զբանն. հաս ի վերայ ժամու և տարաժամու. յանդիմանեա, սաստեա, մխիթարեա ամենայն երկայնամտութեամբ և վարդապետութեամբ:»

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ. ԵՐԿՐ. Դ. 2.

ԳՐԱԴԱՐԱՆ

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑԻ.
1903.

3 MAR 2014

59835

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 26 Ноября 1902 года.

2904-29

Типографія Х. Бархударянцъ, Срѣтенка, Мясной пер., д. Бѣляева.

ՀԱՑ ԴՊՐՈՑԻ

ԱՐԹՈՒՆ ԵՒ ՊԱՐՏԱՃԱՆԱՉ ՀՈՎԻՒՆԵՐԻՆ

ՀԵՂԻՆԱԿԻՑ:

I.

ՄԻ ՏԵՂԵԿԱԳՐԻ ԱՌԹԻՒ[1]

«Թող հասարակութիւնը ստրջանայ, զղջայ իր անհաշիւ, իր անխորհուրդ վարմունքների վերաբերմամբ, երբ կըտեսնի թէ ինչպէս ինքը մեծարել, հաւատացել և վստահել է այնպիսի անձանց, որոնք ամենևին արժանի չեն եղել:»

«1837—1887 Յիսնամեակ Հայոց Հոգևոր Թեմական Դպրանոցի Երևանայ», էջ ԺԹ։

«Երանի՜, հազար երանի՜ մեր նախահայրերին. նրանք վայելում էին արթուն և պարտաճանաչ հովիւների խնամքը...»

„Նոր-Դար“, 1900 թ., № 34-րդ՝ „Թեմական դպրոցների ընարութիւններ“ (առաջնորդող)։

Նորերս Երևանում լոյս է տեսել՝ «Համառօտ տեղեկագիր հոգաբարձութեանս եռամեայ գործունէութեան Երևանայ Հայոց Թեմական (Հոգևոր?) Դպրանոցի ուսումնական և տնտեսական վիճակի մասին՝

---

[1]) Արտատպւում է «Նոր-Դար»-ի 1900 թվի № 182-րդից։

սկսած 1897—1900 ուս. տարի» (կազմից) «Գանձապահ-Հոգաբարձու՝ Գ. Անտոնեանց»։

Մանրաղնին ուշադրութեան արժանի այդ՝ 12 էջից բաղկացած «Համառօտ տեղեկագրի» մասին ես առայժմ կբաւականանամ հետևեալ երկտողով.

ա) 1897—98 ուս. տարեշրջանի «Ծախք»-ի գումարը պիտ կարդալ՝ 30617 ր. 47 կ. — փոխանակ արձանագրածի՝ 30618 ր. 17 կ. (էջ 8)։ Հետևապէս՝ դոյն. ուս. տարեշրջանից մնացած կանխիկ դրամը պիտ կարդալ՝ 341 ր. 15 կ.—փոխանակ արձանագրածի՝ 340 ր. 45 կ. (էջ 8)։

բ) 1898—99 ուս. տարեշրջանի «մուտք»-ի գումարը պիտ կարդալ՝ 18611. ր. 81 կ. — փոխանակ արձանագրածի՝ 18271 ր. 66 կ. (էջ 8)։ Հետևապէս՝ դոյն ուս. տարեշրջանից մնացած կանխիկ դրամը պիտ կարդալ՝ 1653 ր. 61 կ.—փոխանակ արձանագրածի՝ 1313 ր. 46 կ. (էջ 9)։

գ) 1899 — 1900 ուս. տարեշրջանի «մուտք»-ի գումարը պիտ կարդալ՝ 17973 ր. 16 կ. — փոխանակ արձանագրածի՝ 17633 ր. 1 կ. (էջ 10)։ Հետևապէս՝ հոգաբարձութիւնը պէտ յանձնէր իր ցաջորդին (Դպրանոցի արդի հոգաբարձութեանը)՝ իբր դոյն ուսում. տարեշրջանից մնացած կանխիկ դրամ՝ 1681 ր. 62 կ.—փոխանակ արձանագրածի՝ 1341 ր. 47 կ. (էջ 11)։

	1681 ր.	62 կ.
—	1341 ր.	47 կ.
	340 ր.	15 կ.

Այդ՝ 340 ր. 15 կ. դպրոցապարկան գումարը՝

շնորհիւ պ. Գ. Անտոնեանի սխալ հաշուեւութեան (պ. Գ. Անտոնեանը, ինչպէս երևում է, վարժ չի «գումարումն» - «հանումն» գործողութիւնների մէջ, թէև նա Երևանի յայտնի վաճառականներից մէկն է...)՝ ետացել է Դպրանոցի գրամարկղից։ Պ. Գ. Անտոնեանն ունի ֆարցոյական պարտա-ոչ-ՐԿ-ն վերադարձնել 340 ր. 15 կ. գումարը Դպրանոցին։

«Ծանօթ-ՐԿ-ն։ Գանձապահ-Հոգաբարձու պ. Գ. Անտոնեանի հաշուեմատեանը իւրաքանչիւր ամսի վերջը քննւում էր և վաւերացնւում էր Գեր. Նախագահի և հոգաբարձուների ստորագրութեամբ։» (էջ 12)։

Այդ էլ պակաս...

դ) 1879 թւի փետրուարի 6-ին «պ. Վարդան Եղիազարեանը, կամենալով յաւերժացնել իր հանգուցեալ հօր՝ նադվորնի սօվետնիկ Յովհաննէս Եղիազարեանցի յիշատակը, նուիրել է յօգուտ Դպրանոցին երեք հատ առաջին և երկրորդ ներքին 5% փոխառութեան տոմսակներ, սոյն պայմաններով։ Ա.) այդ տոմսակներն և նոցա տանելի գումարները պէտք է միացնուին Դպրոցի մայր գումարի հետ և մնան անմատչելի։ Բ.) Դպրոցի վարչութիւնը պարտաւոր է՝ ա) ամենայն տարի, իւր ժամանակին, ապահովել այդ տոմսակները տիրաժից, և այլն» (Տես «1837—1887 Յիսնամեակ Հայոց Հոգևոր Թեմական Դպրանոցի Երևանայ», էջ 150)։ Տոմսակներն էին՝ առաջին փոխառութեան 8003/47 և 15688/49 ու երկրորդ փոխառութեան 5917/26 (Տես նոյնը, էջ 151)։

Ս. Էջմիածնի սինոդը 1880 թ. յուլիսի 18 № 3714 գրում է. «Ի հետևումն յայտարարութեան

հոգաբարձութեանդ ի Մայիսի այսր ամի № 170 յանուն Վեհափառ Հայրապետի ամենայն հայոց և ի Նորին Սրբութենէ մակագրութեամբ յանձնել Սինոդիս տալ զկարևոր պատասխան, հաշուարարական մասնս Սինոդի Սրբոյ Էջմիածնի ըստ հրամանի Նորին Սրբութեան ծանուցանէ ի տեղեկութիւն հոգաբարձութեանդ թէ՝ պայմանք առաջարկեալք ի Պ. Վարդանայ Եղիազարեանց վասն նուիրեալ ի նմանէ 5% տոմսակայ ներքին փոխառութեանց պարտ է համարել վաւերական։» (Տես նոյնը, էջ 153)։

Մինչդեռ «Համառօտ տեղեկագրում» յիշեալ տոմսակներից մէկը՝ 15688/49 ամենևին չի յիշուած։ Ո՞ւր է և կամ ո՞ւր է ղէպցել այդ տոմսակը։

է) 1898—99 ուս. տարեշրջանի «Ծախք»-ում կարդում ենք՝ «Ուսուցչաց ռոճկագրամ—11353 ր. 40 կ.» (էջ 9)։ Մինչդեռ պաշտօնական փաստ է, որ, նուաստիս տեսչութեան օրով, 1898 թուի դեկտեմբերի 7-ից՝ շնորհիւ ուսուցչական կազմի մէջ տեղի ունեցած փոփոխութիւնների՝ «ուսուցչաց ռոճկագրամ»-ը պակասել և էր՝ 11075 ր. (Տես «Երևանի Հ. Թ. Հ. Դպրանոցի 1898 թ. նոյեմբերի 13—1899 թ. մարտի 22 Մատեան տեսչական Ելից» (ձեռագիր), № 10)։ Ի՞նչպէս հաշտեցնել այդ երկուքները՝ 11353 ր. 40 կ. և 11075 ր.։

ղ) 1899—900 ուս. տարեշրջանի «Ծախք»-ում կարդում ենք՝ «դպրանոցի տեսչի պաշտօնակատար պ. Ս. Տէր-Գաբրիէլեանցին պարգև՝ մի ոսկէ ժամացոյց—100 ր.» (էջ 11)։

Որքան ինձ յայտնի է, Երևանի Հ. Թ. Հ. Դպրանոցի գոյութեան ամբողջ 62 տարուայ ընթացքում

տեղի չի ունեցել մի նման տեսակ պարգևատրութեան դէպք։ Ընդհակառակը։ Երևանի Հ. Թ. Հ. Դպրանոցի մինչ այսօրուայ տեսուչները և տեսչի պաշտօնակատարները, շատ և շատ աննշան բացառութեամբ, միշտ հալածուել են Դպրանոցի հոգաբարձութիւնից։ Հետևապէս՝ ի նկատի առնելով 1899—900 ուս. տարեշրջանում Երևան եկած «100 ռուբլանոց ոսկէ ժամացոյց»-ը, պիտ ենթադրել, որ «տեսչի պաշտօնակատար պ. Ս. Տէր-Գաբրիէլեան»-ը դէ՛ ա՛ռանձին՝ Դպրանոցում ցայսօր չտեսնուած ծառայութիւն է արել Դպրանոցին։ Ի՞նչ է եղել այդ «ծառայութիւն»-ը, որի առաջ գլուխ է խոնարհել «նիւթական նեղ դրութեան» (էջ 5) մէջ խարխափող Դպրանոցը՝ իր խնամատար հոգաբարձուներով հանդերձ։ Եղէ՛ք պարզ խօսող, պարոննե՛ր, և ես առաջինս կծափահարեմ այսօր Դպրանոցից՝ և՛ պաշտօնապէս, և՛ հասարակութեան համախօսականով հեռացրած (Տես ս. տ. «Նոր-Դար», № 117) հոգաբարձութեանդ։

է) Պ. Գ. Անտօնեանը, անշուշտ, մի առանձին հաճութեամբ արձանագրել է «Առձեռն դումար և ստանալիք» վերնագրի տակ՝ «Հոգաբարձութիւնս թողնում է կանխիկ դրամ 1341 ր. 47 կ.» (էջ 11։ Համաձայն վերն ասածիս, պիտ լինի՝ 1681 ր. 62 կ.)։ Թոյլ եմ տալիս ինձ, իմ կողմից աւելացնել, որ հոգաբարձութիւնը, այդ իր թողած կանխիկ դրամին կից, թողել է էլի՝ յետոյ՝ 1) Դպրանոցի աշակերտների թիւն այդ՝ 1897—900 եռամեակի ընթացքում կրել է 299[2]) վեսս։ Այդ թիւը՝ «299[3]) վեսս» ստացուում է, եթէ, ընդունելով

1897—98 ուս. տարեշրջանի աշակերտների թիւը՝ իբր նորմա (նախորդ ուս. տարեշրջանի աշակերտների թիւը չկայ «Համառօտ տեղեկագրում»), համեմատելու լինինք այդ նորման յետագայ՝ 1898—900 ուս. տարեշրջանների աշակերտների թւի հետ (էջ 2—3)։ 2) Դպրանոցը կրել է 17684 ր. 81 կ. կանխիկ վնաս։ Այդ թիւը՝ «17684 ր. 81 կ.[4]) վնաս» ստացւում է, եթէ, ընդունելով 1897—98 ուս. տարեշրջանի «մուտք»-ը՝ իբր նորմա (նախորդ ուս. տարեշրջանի «մուտք»-ը չկայ «Համառօտ տեղեկագրում»), համեմատելու լինինք այդ նորման յետագայ՝ 1898—900 ուս. տարեշրջանների «մուտքերի» հետ (էջ 7—11)։

Եթէ մի վաճառական երեք տարուայ ընթացքում կարիք չունի իր «մուշտարիներ»-ի թիւը հաշուելու, քանի որ՝ մատը մատին չտալով և «օրօշկտալով»՝ աշխատում է 1681 ր. 62 կ., նա՝ «տեղը նստած, մուլք դատող» վաճառականն ունի պատճառ—առիթ ուրախ լինելու, իսկ եթէ այդ գումարն «աշխատում է» մի Դպրոց՝ միաժամանակ զրկուելով 299[5]) աշակերտից և չորացած-ցամաքած տեսնելով իրեն զրամական սնունդ մատակարարող աղբիւրները (վնաս՝ 17684 ր, 81 կ.), այն ժամանակ զգացւում է ծանրագոյն ցաւ, այն ժամանակ ամենուրեք լսւում է՝ «պ.պ. հոգաբարձուներ, ո՞ւր էիք, ի՞նչ գործի էիք, ինչո՞ւ թողեցիք, որ պակասի Դպրանոցի աշակերտների թիւը, ինչո՞ւ թողեցիք, որ պակասի Դպրանոցի եկամուտը, ինչո՞վ կապացուցէք, որ «հոգաբարձութիւնը իւր ժողովներում միշտ աշխատել է իւր կարեաց չափ օգտաւէտ լինել Դպրանոցին, գործել է համերաշխ իւր տեսչի հետ (այսինքն՝ պ. Ս. Տէր-Գաբրիէլեանի՞ հետ—հաւատում ենք) և ամեն կերպ ջանք է դրել (,) որքան կարելի է, Դպրանոցի նիւթական միջոցներն աւելացնել, որպէս զի հնարաւոր լինի Դպրանոցի ցանկալի յառաջադիմութիւնը յառաջ տանել» (էջ 4—5), որ «հոգաբարձութիւնը ամեն կերպ աշխատել է բարւոքել Դպրանոցի նիւթական վիճակը» (էջ 6)։

[2]—[3]) Այդ թիւը սխալ էր տպւած «Նոր-Դար»-ի № 182-րդում։ Այդ առթիւ «Նոր-Դար»-ի 1900 թւի № 187-րդում կարդում ենք՝

«Վրիպակ. „Նոր-Դար"-ի 182-րդ համարում „Մի տեղեկագրի առթիւ" յօդուածի հինգերորդ սիւնեակի մէջ սխալ է սպրտել. փոխանակ կարդալու՝ „... 1) դպրանոցի աշակերտների թիւն այդ 1897—900 եռամեակի ընթացքում կրել է 361 վնաս։ Այդ թիւը՝ 361 վնաս ստացւում է, եթէ...", պիտի կարդալ՝ „... 1) դպրանոցի աշակերտների թիւն այդ՝ 1897—900 եռամեակի ընթացքում կրել է 299 վնաս։ Այդ թիւը՝ 299 վնաս ստացւում է, եթէ..."։ Հետևաբար և նոյն սիւնեակի վերջին տողերը փոխանակ կարդալու՝ „... միաժամանակ զրկուելով 361 աշակերտից և չորացած...", պիտի կարդալ՝ „... միաժամանակ զրկուելով 299 աշակերտից և չորացած..."»։

[4]) Այդ թիւը սխալ էր տպւած «Նոր-Դար»-ի № 182-րդում,—այն է՝ տպւած էր՝ 15897 ր. 88 կ.։ Այդ մասին չէր ակնարկւած «Նոր-Դար»-ի № 187-րդի «Վրիպակ»-ում; քանի որ այդ թւի սխալ տպւած լինելը հասկանալի է ինքն ըստ ինքեան՝ պարբերութեան մտքից։

[5]) Տես ծանօթ. 2—3։

Այո՛, պ.պ. Զաքար-աղա (sic!) Գէորգեան *), Գրիգոր Ամիրեան, Տիգրան Աֆրիկեան, Արտաշէս Գաբրիէլեան և Գէորգ Անտոնեան, ո՞ւր էիք, ի՞նչ գործի, ինչո՞ւ թողեցիք...

ը) 1898 թ.-ի դեկտեմբերի 9-ի հոգաբարձական ժողովում հարց բարձրացրի Դպրանոցի կանոնադրութեան և ծրագրի որոշականացման մասին և առաջարկեցի այդ հարցը քննելու համար կազմել խառն հոգաբարձական-ուսուցչական ժողով: Առաջարկս ընդունուեց: Սակայն հոգաբարձական յետադայ՝ դեկտեմբերի 16-ի ժողովում, երբ կրկին բարձրացրի այդ հարցը, պ.պ. հոգաբարձուները նայում էին Տ. Նախագահի երեսին, և... առաջարկս ջնջուեց: Ժողովից յետոյ՝ ճանապարհին հոգաբարձուներ՝ պ.պ. Գ. Անտոնեան և Գր. Ամիրեան գատում էին՝ «Տո՛, էս ե՛պիսկոպոսը գլուխ ա պահում միայն. անցեալ անգամ համաձայնուեց խառն ժողով կազմել, այսօր՝ հրաժարուեց... Տե՛սնես էդ ո՞վ ա դրա գլուխը լցնում... բայց ափսո՞ս...»: — «Որ այդպէս ափսոսում էք, բա ինչո՞ւ ժողովում լռել էիք, պարոննե՛ր. չէ՞ որ ես բաւականին պարզեցի առաջարկիս և խառն ժողովի նպատակը» — ընդմիջեցի ես: Այդ խօսքերիս պատասխանն էր՝ «Է՞հ... տեսնենք ի՞նչ ցին ա գալիս մեր գլուխը»...

Ես էլ կհետևեմ այդ նախազգուշական խօսքերին՝ տեսնեմ «ինչ ցին ա գալիս» ի՛մ գլուխը, և առայժմ կանգ չեմ առնի պ. Գ. Անտոնեանի «Համառօտ տեղեկագրում» սպրատած մի պաշտօնական անփաղաքավարութիւն վրա: Qui vivra verra — ով կապրի՝ կտեսնի...

*) Ց. Գ.՝ †.

ԲԺ. ՍԻՄԷՈՆ ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ.

19 IX/12 00 թ.,

Մոսկուա:

II.

«Մի պեղեկագրի ա՞ռնի» յօդուածս «Նոր-Դար»-ի խմբագրութեանն ուղարկելուց յետոյ՝ ես դիմեցի Երևանի Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցի Տ. Նախագահ՝ Գեր. Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանին այսպէս՝

«Նորին Բարձր Սրբազնութեան
Գերապատիւ Տ. Նախագահին Երևանի
Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցի

«Ձերդ Բարձր Սրբազնութի՛ւն.

«Ուշի ուշով կարդալով Դպրանոցիդ 1897—1900 ուսումնական տարեշրջանների „Համառօտ տեղեկագիր"-ը, որ կազմել է և այս տարի լոյս ընծայել Դպրանոցիդ դոյն ուսումնական տարեշրջանների Գանձապահ-Հոգաբարձու՝ պ. Գ. Անտոնեանը՝ բարոյական պարտաւորութիւնս համարեցի ամենախոնարհաբար խնդրել Ձերդ Բարձր Սրբազնութեան ուշադրութիւնը յիշեալ „Համառօտ տեղեկագրի" հետևեալ կէտերի վրա.

«Ա) 1897—98 ուս. տարեշրջանի „Ծախք“-ի գումարը պիտ կարդալ՝ 30617 ր. 47 կ. — փոխանակ արձանագրածի՝ 30618 ր. 17 կ. (էջ 8)։

«Հետևապէս՝ դոյն ուսումնական տարեշրջանից մնացած „կանխիկ դրամ“-ը պիտ կարդալ՝ 341 ր. 15 կ. — փոխանակ արձանագրածի՝ 340 ր. 45 կ. (էջ 8)։

«Բ) 1898—99 ուս. տարեշրջանի „Մուտք“-ի գումարը պիտ կարդալ՝ 18611 ր. 81 կ. — փոխանակ արձանագրածի՝ 18271 ր. 66 կ. (էջ 8)։

«Հետևապէս՝ դոյն ուսումնական տարեշրջանից մնացած „կանխիկ դրամ“-ը պիտ կարդալ՝ 1653 ր. 61 կ. — փոխանակ արձանագրածի՝ 1313 ր. 46 կ. (էջ 9)։

«Գ) 1899—900 ուս. տարեշրջանի „Մուտք“-ի գումարը պիտ կարդալ՝ 17973 ր. 16 կ. — փոխանակ արձանագրածի՝ 17633 ր. 1 կ. (էջ 9)։

«Հետևապէս՝ Դպրանոցիդ 1897/900 ուսումնական տարեշրջանների հոդաբարձութիւնը պէտք յանձնէր իր ցաջորդին՝ Դպրանոցիդ արդի հոդաբարձութեանը՝ իբր դոյն ուս. տարեշրջաններից մնացած „Կանխիկ դրամ“՝ 1681 ր. 62 կ. — փոխանակ արձանագրածի՝ 1341 ր. 47 կ. (էջ 11)։

«1681 ր. 62 կ.—1341 ր. 47 կ. = 340 ր. 15 կ.։

«Այդ՝ 340 ր. 15 կ. դպրոցապարկան գումարը Դպրանոցիդ 1897—900 ուսումնական տարեշրջանների հոդաբարձութիւնը՝ յանձին իր պ. Գանձապահի՝ դէտ- ոնի յանձնէր- իր ցաջորդին՝ Դպրանոցիդ արդի հոդաբարձութեանը։

«Ապա՝

«Դ) „Համառօտ տեղեկագրում“ ամենևին չէ յիշուած առաջին փոխառութեան 15688/49 տոմսակը, որ նուիրել է Դպրանոցիդ 1879 թուին պ. Վարդան Եղիազարեանը (Տես Դպրանոցիդ „Ցիսնամեակ“-ը, էջ՝ 150—153)։

«Է) 1898—99 ուս. տարեշրջանի „Ծախք“-ում կարդում ենք՝ „Ուսուցչաց ռոճկագրամ 11353 ր. 40 կ.“ (էջ 9)։ Մինչդեռ պաշտօնական փաստ է, որ նուաստիս տեսչութեան օրով — 1898 թուի դեկտեմբերի 7-ից՝ շնորհիւ ուսուցչական կազմի մէջ տեղի ունեցած փոփոխութիւնների՝ „Ուսուցչական ռոճկագրամ“-ը պակասեց և էր՝ 11075 ր. (Տես „Երևանի հ. Թ. հ. Դպրանոցի 18 XI/13 98 թ.—18 III/22 99 թ. „Մատեան տեսչական ելից“ [ձեռագիր], № 10)։

«Ի՞նչպէս հաշտեցնել այդ երկու թուերը՝ 11353 ր. 40 կ. և 11075 ր։

«Ձերդ Բարձր Սրբազնութեան

«ամենախոնարհ ծառայ—

«Նախկին Տեսուչ Դպրանոցիդ՝

«ԲԺԻՇԿ ՍԻՄԷՕՆ ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ

«19 $\frac{X}{14}$ 00 թ.,

«Մոսկվա։

«Հասցէս՝ Москва, Тверская ул., д. Гиршманъ, кв. 22, Д-ру С. Г. Шахъ-Назарову».

XIX.

Իբր պատասխան «Մի պեղեկագրի պոռնիկ» յօդուածիս՝ պ. Գ. Անտոնեանցը դիմեց «Նոր-Դար»-ի խմբագրութեանը հետևեալ «Նամակ»-ով.

«ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ [6])

«Մեծապատիւ պ. խմբագիր,

«Ցանկալով բժիշկ պ. Շահ-Նազարեանցի՝ «Նոր-Դար»-ի № 182-րդ համարում գրած նամակին պատասխանել, խնդրեմ այս գրութեանս մի անկիւն շնորհէք ձեր լրագրի մօտակայ համարներից մէկում։

«Բժիշկ Շահ-Նազարեանցը Երևանի հ. հոգևոր թեմական դպրանոցի նախկին հոգաբարձութեան համառօտ տեղեկագրի առթիւ հոգաբարձութեանը մեղադրում է ասելով, որ՝

«ա) 340 *ռուբլի* 15 *կ. պակասել է դպրանոցի դրամարկղից.*

«բ) Պ. Վարդան Եղիազարեանի նուիրած երեք տոմսակներից մէկն անյայտացել է.

«գ) 1898/99 *ուսում. տարուայ ուսուցչաց ռոճիկն աւելացել է նախահաշուից* 278 *ռուբլի* 40 *կոպէկ.*

«դ) *Հոգաբարձութիւնը կատարել է մինչև այժմ մի չտեսնուած բան, այն է՝* 100 *ր. արժողութեամբ ոսկէ ժամացոյց է նուիրել տեսչի պաշտօնակատար Ս. Տէր-Գաբրիէլեանին.*

«ե) 1897/900 *տարիներում աշակերտների թիւը պակասել է* 361-*ով.*

[6]) *Տես «Նոր-Դար»,* 1900 *թ.,* № 197՝ *թեր և դէմ։*

«զ) *Մենք՝ հոգաբարձուներս պաշտօնապէս և հասարակական համախօսականով հեռացրած ենք եղել.*

«է) *Ինչ-որ մի կարծիք ենք յայտնել հոգաբարձական ժողովից դուրս նախագահ սրբազան հօր հասցէին.*

«*Մի առ մի պատասխանում ենք յիշեալ մեղադրական կէտերին.*

«ա) *Արդարև պ. Շահ-Նազարեանցի՝* 1898/99 *ուսում. տարուայ մտից հաշուի* 8-*րդ էջում նկատած գումարը սխալ է. փոխանակ* 18611 *ր.* 21 *կոպէկի, գրուած է* 18271 *ր.* 66 *կոպէկ, պակաս է* 339 *ր.* 55.։ *Այդ սխալի մասին այսքանը միայն կասեմ, որ տեղեկագիրը կազմուեց միայն համառօտապէս ծանօթացնելու ընթերցող հասարակութեանը հաշիւների հետ, և ոչ թէ այդ գրութիւնը պէտք է ծառայէր իբրև դոկումենտ։ Ակնյայտնի պարզ է, ուրեմն, որ դա մի սխալ է եղել արտագրողի կողմից։ Կարծեմ այժմեան հոգաբարձութիւնը պակաս հաշուագէտ չէ պ. Շահ-Նազարեանցից՝ թոյլ տալու որ այդքան գումար կորուստի մատնուի մի հիմնարկութեան, որը իւր գոյութիւնը պահպանում է հասարակութեան նուիրաբերած կոպէկներով. այժմեան հոգաբարձութիւնը հաշիւներն ստացել է ժապաւինեալ տոմարով և արդարացուցիչ դոկումենտներով։ Եթէ պ. Շահնազարեանցի գտած* 340 *ր. սխալն ուղիղ լինէր, այն ժամանակ այդ գումարի տեղ կրկնապատիկ և եռապատիկ կըվճարէի, որի համար կարծեմ պ. Շահ-Նազարեանը ևս կըվկայէ։*

«բ) *Պ. Վարդան Եղիազարեանի նուիրած խաղարկութեան տոմսակներից մէկի համարը չհամեմատելու համար, այլ առանձին համար լինելու պատճառով, ես իբրև գանձապահ հոգաբարձու ինձ պատասխանատու չեմ համարում, որովհետև նախ՝ երեք տոմսակների թիւն ուղիղ չէ, երկրորդ՝ երևի նոյն իսկ տոմսակները նուիրաբերող պ. Եղիազարեանի հոգաբարձութեան օրով, տոմսակների խաղարկութեան ժամանակ այրուած է եղել (տիրաժ) փոխարէնը մի այլ տոմսակ ստանալով, որի համար ևս տարբերում է յիսնամեակի տեղեկագրում գրուած համարից։*

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUZ-Арм.ССР
Ա. Ն.

Այսքանը կարող եմ ասել, որ տոմսակն ինչպէս և ինչ համարով որ ես ստացել եմ նախկին հոգաբարձութիւնից, այնպէս էլ վերադարձրել եմ ներկայ հոգաբարձութեանը։

«գ) 1898/99 ուսուցչաց ռոճկագրամը 11075 ռուբլուց աւելի ցոյց տալու մասին թող ներուի ինձ ասել, որ ինքը պ. Շահ-Նազարեանցն է եղել պատճառը, որովհետև նոյն ուսումնական տարուայ մարտ ամսում երբոր հոգաբարձութիւնը հեռացրեց պ. Շահ-Նազարեանցին տեսչական պաշտօնավարութիւնից, հարիւր ռուբլի տուեց պ. Պալեանին տեսչի պաշտօնակատարութեան համար, իսկ միւս գումարը գործադրուել է այլ անհրաժեշտ ծախսերի համար։

«դ) Պ. Սարգիս Տէր-Գաբրիէլեանին հարիւր ռուբլի արժողութեան ժամացոյցն իրաւացի ճանապարով է տուել հոգաբարձութիւնը, քանի որ 1897/98 և 1899/900 ուսումնական տարիներում եղել է տեսչի պաշտօնակատար. իսկ հոգաբարձութիւնն իրաւունք չէր համարում ձրի ծառայեցնել մի անհատի, և եթէ դրամով վարձատրէր, այն ժամանակ եռակի դրամ պէտք է վճարէր հոգաբարձութիւնը, քան թէ ժամացոյցի արժողութիւնն էր (100 ռ.)։

«ե) Պ. Շահ-Նազարեանցին լաւ ծանօթ է Երևանի հայոց հոգևոր թեմական դպրանոցի աշակերտների դրութիւնը. փոքր ի շատէ կարողութիւն ունեցող ծնողներն իրենց որդիքը տալիս են ուսանելու գիմնազիօնում և ուսուցչական սեմինարիայում, իսկ հայոց դպրոցում սովորում են միայն չքաւոր ծնողների զաւակները, շատ չնչին բացառութեամբ. շատերի հեռանալու պատճառն հինգ ռուբլի թոշակագրամ պահանջուելն է եղել, կամ այն, որ մասնաւոր գրել կարդալ սովորելուց յետոյ, ծնողները հանում են իրենց որդոց դպրոցից և տալիս են արհեստի. բայց 361 աշակերտ պակասելու վերաբերմամբ չենք կարողանում հասկանալ, թէ պ. Շահ-Նազարեանը ո՛րտեղից է վերցրել այդ թիւը, քանի որ տեղեկագրում գրուած է 1897/98 ուսումն. տարում եղել է 602 աշակերտ, նոյն և 1898/99 տարիներում աւարտել են 26, 1899/900 տարուան ընթացքում մնում է 441 աշակերտ, ուրեմն դուրս գալով 602-ից երկու տա-

ուան ընթացքում 26, դպրանոցից արտաքսուած և անբաղդացած 4 և մնացած 441 աշակերտները, ընդամենը 471 հոգի, կըպակասի 131 աշակերտ և ոչ 361։

«զ) Պ. Շահ-Նազարեանցի նկատողութիւնը բոլորովին անտեղի է և ճշմարտութիւնից զուրկ. հոգաբարձութիւնն իր հրաժարականն ներկայացրել էր Վեհափառ Հայրապետին 1900 թուի ապրիլ ամսում, երբոր գնացել էր Էջմիածին Վեհի Թիֆլիսից վերադարձը շնորհաւորելու, և ոչ թէ համախօսականով պաշտօնապէս հրաժարուել է։

«է) Հոգաբարձութեան ժողովից դուրս խօսակցութիւն ոչ մի ժամանակ չի եղել նախագահ սրբ. հօր հասցէին, և եթէ եղել է մասնաւոր խօսակցութիւն, դրա հրապարակ հանելը պատիւ չի բերում նամակագրին։

«Ծանրաբեռնուած լինելով սեպհական գործերով, հաղիւ հաղ միջոց ունեցայ այս գրութեամբ պատասխանելու պ. Շահ-Նազարեանցի անտեղի գրութեանը. սրանով վերջ եմ տալիս այսուհետև պ. Շահ-Նազարեանցի գրութիւններին, եթէ լինին։

«ԳԷՈՐԳ ԱՆՏՕՆԵԱՆ

«Երևան, 20 հոտկ. (1900 թ.)»։

IV.

Իբր պատասխան պ. Գ. Անտօնեանի «պատասխան»-ին՝ ես ուղարկեցի «Նոր-Դար»-ի խմբագրութեանը հետևեալ երկտողը.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ [7])

«Նոր-Դար»-իդ № 182-ում զետեղած՝ «Մի տեղեկագրի առթիւ» յօդուածումն ես տրամադիր չէի

[7]) Արտատպւում է «Նոր-Դար»-ի 1900 թուի № 236-ից (թեր և դէմ)։

մանրաշնին ուսումնասիրութեան առնել այդ «Տեղեկագիր»-ը, թողնելով այն աւելի յարմար ժամանակի։ Ո՛չ-մանրաշնին կլինի և ներկայ՝ այդ «Տեղեկագրի» հեղինակ՝ պ. Գ. Անտոնեանի «պատասխան»-ի («Նոր-Դար», № 197) առթիւ գրած այս երկտողը։ Ես՝ ևս, հետևելով պ. Գ. Անտոնեանի մեթոդին՝ «մի առ մի պատասխանում եմ» նրա «պատասխան»-ի «կէտերին»։

ա) 1898 — 99 ուսում. տարեշրջանի «մուտք»-ը պիտ կարդալ՝ 18611 բ. 81 կ. — փոխանակ «պատասխան»-ում արձանագրածի՝ 18611 բ. 21 կ.։ Հետևապէս՝ «պակաս»-ը պիտ կարդալ՝ 340 բ. 15 կ.— փոխանակ «պատասխան»-ում արձանագրածի՝ 339 բ. 55 կ.։

Պ. Գ. Անտոնեանը ընդունում է, որ իր «Տեղեկագրում» արձանագրած «գումարը սխալ է» և ապա՝ դիմում է հետևեալ պատճառաբանութեան՝

«Այդ սխալի մասին այսքանը միայն կասեմ, որ տեղեկագիրը կազմուեց միայն համառօտապէս ծանօթացնելու ընթերցող հասարակութեանը հաշիւների հետ, և ոչ թէ այդ գրութիւնը պէտք է ծառայէր իբրև զոկումենտ։ Անկայպանի պարզ է, ուրեմն, որ դա մի սխալ է եղել արտագրողի կողմից»։

Սակայն սա ի՞նչ պէսակի լոգիկա է։ Ո՞րտեղից է «անկայպանի պարզ»։ Ի՞նչ իրաւունքով «Համառօտ տեղեկագիր»-ը կրում է «Գանձապահ-Հոգաբարձու՝ Գ. Անտոնեանց» (էջ 12) ստորագրութիւնը, եթէ այն «զոկումենտ» չի։ Հապա ի՞նչ է։ Հապա ինչու՞ է պ. Գ. Անտոնեանն իր «պատասխան»-ում անուանում այն՝ «Երևանի Հ. Հոգևոր Թեմական դպրանոցի նախկին Հոգաբարձու-Ընկեան համառօտ տեղեկագիր»։ Վերջապէս, ի՞նչպէս կապել պ. Գ. Անտոնեանի խօսքերը՝

«Արդարև պ. Շահ-Նազարեանցի՝ 1898—99 ուսում. տարուայ մուտից հաշուի 8-րդ էջում նկատած գո-մարը «փոքր է»—նոյն պ. Գ. Անտոնեանի հետևեալ խօսքերի հետ՝

«Եթէ պ. Շահ-Նազարեանի գտած 340 բ. (15 կ.?) սխալն ուղիղ լինէր, այն ժամանակ այդ գումարի տեղ կրկնապատիկ և եռապատիկ կըվճարէի, որի համար պ. Շահ-Նազարեանցը ևս կըվկայէ»։

Ուրեմն՝ ի՞նչ է—սխալ կա՞յ, թէ՞ չկայ։ Ես՝ յենուելով «Տեղեկագրի» վրա՝ կրկին և կրկին «վկայում եմ», որ «փոքր կա՛յ, այն է՝ «պ. Գ. Անտոնեանն ունի բարոյական պարտա-որո-Ընկ-ն վերադարձնել 340 բ. 15 կ. գումարը Դպրանոցին» [8])։

Ապա պ. Գ. Անտոնեանը գրում է՝ Դպրանոցի «այժմեան հոգաբարձութիւնը հաշիւներն ստացել է ժապաւինեալ տոմարով և արդարացուցիչ զոկումենտներով»։

Իր ժամանակին ես արդէն գիմել եմ Երևանի Հ.

[8]) Յ. Գ.։ Ի դէպս։ Պ. Նախկին «Հոգաբարձու-Գանձապահ»-ը, անշուշտ, շփոթում է երկու բան, այն է որ՝ «յլ է՝ ձեռնհաս լինել «կրկնապատիկ և եռապատիկ վճարել»-ու իր ժամանակին չվճարածը, և «յլ՝ ամենայն պարտաճանաչութեամբ վարել հասարակութիւնից և պաշտօնապէս իրեն յանձնուած «Հոգաբարձու-Գանձապահ»-ի պատասխանատու պաշտօնը։ Այստեղ ո՛չ թէ միայն ժամանակի տարբերութեան հարց կայ, այլ՝ պարտաճանաչ պաշտօնավարութեան բացակայութեան հարց ևս...

Թ. Հ. Դպրանոցի Գերապատիւ Տ. Նախագահին՝ ամենախոնարհաբար հրաւիրելով Նորին Գերապատուութեան ուշադրութիւնը պ. Գ. Անտոնեանի «Համառօտ տեղեկագրում» սպրտած սխալների վրա։ Կարծ՝ այդ «դոկումենտներ»-ն ե՛ս էս ի նկատկի ունեցել եմ։ Սակայն ի՞նչ են պարունակում այդ «դոկումենտներ»-ը—այդ՝ Դպրանոցի արդի հոգաբարձութիւնից զատ՝ ոչ ոք չգիտի։ Հետևապէս՝ այդ «դոկումենտներ»-ի վրա շեշտելը պ. Գ. Անտոնեանի «պատասխան»-ում կարող է հետևցնել միայն մի բան՝ դնել հարցը հրապարակի վրա և սպասել, որ Դպրանոցի արդի հոգաբարձութիւնն արդարացնի պ. Գ. Անտոնեանին։ Ուրեմն՝ «պատէ՛նդ»[9]), նամանաւանդ որ իրեն՝ պ. Գ. Անտոնեանի «պատասխան»-ի այդ՝ կրկնակի սխալ պարունակող «կէտ»-ից միանգամայն դժուարին է՝ որ և է բան հասկանալ։

Ի դէպս։ Թէ ո՛՞ՏՆ ձեռքով է գրել «արտագրող»-ը—այդ հարցը շատ հեշտութեամբ կարող է լուծել պ. Է. Տէր-Գրիգորեանը էս, որի տպարանում (Երևան) տպւած է պ. Գ. Անտոնեանի «Տեղեկագիր»-ը։

Բ) Պ. Գ. Անտոնեանը գրում է՝ «իբրև գանձապահ հոգաբարձու ինձ պատասխանատու չեմ համարում, որովհետև նախ՝ երեք տոմսակների թիւն ուղիղ չէ, երկրորդ և այլն», և ապա՝ «տոմսակն ինչպէս և ինչ համարով որ ես ստացել եմ նախկին հոգաբարձութիւնից, այնպէս էլ վերադարձրել եմ ներկայ հոգաբարձութեանը»։

---

[9]) Ց. Գ.։ Տես ցածը՝ V։

Ես չեմ հասկանում՝ ի՞նչ «էջէ+ տոմսակների» մասին է պ. Գ. Անտոնեանի խօսքը, քանի որ, բացի իմ ակնարկած տոմսակից, ուրիշ տոմսակների թիւերը ճիշտ են։ Իսկ ինչ վերաբերում է իմ ակնարկած տոմսակին — կարևոր եմ դատում շեշտել, որ այդ տոմսակը ց 1887 թիւը կա՛ր (Տես «Ցիսնամեակ Երևանի Հ. Թ. Հ. Դպրանոցի», էջ 233)։

Գ) Դպրանոցի տեսչութիւնից հեռացել եմ՝ համաձայն Վեհափառ Կաթողիկոսի 1899 թ. մարտի 22-ին ստացած (Թիֆլիսից) հեռագրին, և ոչ՝ «դպրանոցի հոգաբարձութեան» որոշմամբ[10]։ Պաշ-

---

[10]) Ց. Գ.։ Երևանի Հ. Թ. Հ. Դպրանոցի տեսչութիւնը վարած օրով քանիցս աշխատել եմ բացատրել և հասկացնել այն ժամանակւայ Տ. Նախագահ՝ Ներսէս արքեպիսկոպոս Խուդավերդեանցին, որպէս և Դպրանոցի պ.պ. հոգաբարձուներին թէ՝ Հ. Թ. Հ. Դպրանոցի Տեսչին արձակողն է և պիտ լինի նրան իր՝ տեսչական պաշտօնում հաստատողը—այն է՝ ազգիս Վեհափառ Կաթողիկոսը։—Այդ նոյն, ըստ իս, միակ օրինական տեսակէտն արծարծել է Երևանի Հ. Թ. Հ. Դպրանոցի 1890 թւի օգոստոսի 9-ի հոգաբարձական ժողովում Դպրանոցի այն ժամանակւայ հոգաբարձու՝ պ. Զալալեանը, պնդելով թէ՝ «հոգաբարձութիւնը չունի իրաւունք քննութեան ենթարկել Տեսչի հարցը, քանի որ Նորին Վեհափառութիւնը չէ արձակել նրան (Տեսչին)» (Տես «Երևանի Հ. Թ. Հ. Դպրանոցի 1890 թւի հոգաբարձական Օրագրութիւնը» (ձեռագիր), № 56, ժողով 9-ն օգոստոսի)։—Բայց և այդպէս՝ Ներսէս արքեպիսկոպոս Խուդավերդեանցը և Դպրանոցի հոգաբարձուներն անկարող հանդիսացան ըմբռնել այդ հասարակ օրինականութիւնը և ոտնակոխ անելով՝ և՛ Դպրանոցի կանոնադրութեան բուն իմաստը, և՛ ազգիս Վեհափառ հայրապետի իրաւունքը, իրե՛նց իւրացրին նաստիս Երևանի Հ. Թ. Հ. Դպրանոցի

տօնական փաստը պիտ արձանագրել ճշտիւ։ Ինձ յայտնի է, տեսչի պաշտօնակատարի պաշտօնով պ. Մ. Պալեան՝ վարելով այդ պաշտօնը ցսեպտեմբեր, այն է՝ մօտաւորապէս վեց ամիս։ Դպրանոցի տեսչի պաշտօնակատարները ցայսօր ստացել են՝ 200 ր. տարեկան կամ՝ 16 ր. 66 կ. ամսական ռոճիկ։ Հետևապէս՝ պ. Մ. Պալեանն ունէր ստանալու 99 ր. 94 կ.։ Հաշուենք 100 ր.։ Պ. Գ. Անտոնեանի «Տեղեկագրում» արձանագրուած է՝ «ուսուցչաց ռոճկագրամ 11353 ր. 40 կ.» (էջ 9).—փոխանակ՝ 11075 ր.։ Զանազանութիւնը՝ 11353 ր. 40 կ.—11075 ր.= 278 ր. 40 կ.։ Հանելով պ. Մ. Պալեանի 100 ր. ռոճիկը—կստանանք՝ 278 ր. 40 կ.—100 ր.=178 ր. 40 կ.։ Ըստ պ. Գ. Անտոնեանի «պատասխան»-ին՝ «այդ գումարը գործադրուել է այլ անհրաժեշտ ծախսերի համար»։

Ես հարցնում եմ՝ ի՞նչ «այլ անհրաժեշտ ծախսեր» կարելի է միաժամանակ գրել «ուսուցչաց ռոճկագրամ» յուցանակի տակ, բացի ուսուցիչների ռոճկից։ Այդ նամանաւանդ անհասկանալի է այն պատ-

---

տեսչութիւնից արձակելու իրաւունքը (Տես «Երևանի հ. Թ. հ. Դպրանոցի 18 XI/13 98 թ. — 18 III/22 99 թ. „Մատեան մտից առ Տեսուչն“» [ձեռագիր], №№ 79 և 80՝ Դպրանոցի հոգաբարձութեան №№ 86 և 87-րդ պաշտօնական գրութիւնները)։ Սակայն ես, ի հարկէ, չէի կարող ոչ և է նշանակութիւն տալ նման տեսակ ապօրինի գրութիւններին, և դիմեցի այդ առթիւ ազգիս Վեհափառ Կաթողիկոսին (Տես «Երևանի հ. Թ. հ. Դպրանոցի 18 XI/13 98 թ. — 18 III/22 99 թ. „Մատեան տեսչական Ելից“» [ձեռագիր], № 96)։

ճառով, որ դոյն 1898—99 ուսում. տարեշրջանի «Ծախք»-ում, առանց այդ էլ երեք անգամ պատահում են անորոշ խօսքեր՝ «և մանր ծախք», «և այլ պարագաների վերանորոգութեան», «և այլ պարագայի»։ Ինչ են նշանակում այդ կրկնակի «և այլ»-ները — դժուարին է հասկանալ։ Յամենայն դէպս՝ այդ «և այլ»-ներով կարելի է՝ և՛ բնապահպանին ռոճիկ, և՛ ապրանային ապրանքներ...

Դ) Պ. Ս. Տէր-Գաբրիէլեանը «չէր» չի վարել 1897—98 ուսում. տարեշրջանի տեսչի պաշտօնակատարութիւնը, այլ ստացել է ամսական 16 ր. 66 կ.։ Սրան ապացոյց է, ի միջի այլոց, և այն, որ, երբ ես 1898 թ. նոյեմբերի 18-ի հոգաբարձական ժողովում, համաձայն պ. Ս. Տէր-Գաբրիէլեանի (նախորդիս) խնդրին, խնդրեցի «չկարել պ. Ս. Տէր-Գաբրիէլեանի՝ իբր տեսչի պաշտօնակատարի այդ ամսւայ ռոճիկը», հոգաբարձութիւնը խոստացաւ տալ և տուեց իսկ 16 ր. 66 կ.։ Վերջապէս, այդ փաստը կարող է վկայել և՛ ինքը պ. Ս. Տէր-Գաբրիէլեանը [11]), իսկ Դպրանոցի «Ծախք»-ի մատեաններն ունին վկայելու այդ պաշտօնապէս։

Ապա՝ 1899—900 ուսում. տարեշրջանում պ. Ս. Տէր-Գաբրիէլեանը վարել է տեսչի պաշտօնակատարի պաշտօնն արժ. Բենիկ վարդապետից յետոյ, այսինքն 1900 թ. մայիսի 11-ից մինչև յունիսի 5-ը, երբ Վ. Կաթողիկոսի սրբատառ կոնդակով արձակուած է եղել Երևանի հ. Թ. հ. Դպրանոցի ամբողջ ուսուց-

---

[11]) Յ. Գ.. Պ. Ս. Տէր-Գաբրիէլեանն աւելի «նպատակայարմար» դատեց՝ «ձկան խորհրդաւոր լռութիւն»-ը...

չական խումբը, որոնց թվում և՝ պ. Մ. Տէր-Գաբրիէլեանը (Տես «Նոր-Դար», № 110՝ թղթակցութիւն Երևանից)։ Ուրեմն՝ պ. Մ. Տէր-Գաբրիէլեանը 1899—900 ուսում. տարեշրջանում վարել է տեսչի պաշտօնակատարի պաշտօնն ընդամենը՝ Տօպա-օրապէս մի ամիս։ Հետևապէս՝ նա ունէր ստանալու միայն և եթ՝ Տօպա-օրապէս 16 ր. 66 կ., մինչդեռ հոգաբարձութիւնը վարձատրել է նրան 100 ռուբլանոց «ոսկէ ժամացոյց»-ով։ Ես այդ անուանում եմ՝ Ցանգպամայն անկրա-ապէ վարձա-ն «Հասարակաբնեան նա-կրաշ կոպէկնէրէ»։ Իսկ երբ պ. նախկին «գանձապահ-հոգաբարձու»-ն հրապարակաւ յայտնում է՝ «հոգաբարձութիւնն իրաւունք չէր համարում յրչ ծառայեցնել մի անհատի, և եթէ դրամով վարձատրէր, այն ժամանակ եռակի (!) դրամ պէտք է վճարէր հոգաբարձութիւնը, քան թէ ժամացոյցի արժողութիւնն է (100 ր.)»,—ես ա՛յդ պէտքի ինքնապաշտպանութեան անունը դժուարանում եմ արտասանել լրագրի էջերից... Եւ, վերջապէս, ի՞նչ իրաւունք ունէր ապրիլին իր հրաժարականը ներկայացրած հոգաբարձութիւնը (կէտ՝ ը.) յանկարծ վանել Դպրանոցի դրամարկղից որ և է գումար։

Է) Պ. Գ. Անտոնեանը գրում է՝ «361 աշակերտ պակասելու վերաբերմամբ չենք կարողանում հասկանալ, թէ պ. Շահ-Նազարեանը որտեղից է վերցրել այդ թիւը», և ապա՝ «պատասխանում է», որ «պակաս»-ը պիտ կարդալ՝ «131 աշակերտ և ոչ 361»։

«Նոր-Դար»-ի խմբագրութիւնն արդէն ուղղել է «Մի տեղեկագրի առթիւ» յօդուածումն սպրտած սխալը, այն է, որ 1897 — 900 եռամեակի ընթաց-

քում աշակերտների թվի վերաբերմամբ պիտ կարդալ՝ 299,—փոխանակ սխալմամբ շարածի՝ 361 (Տես «Նոր-Դար», № 187՝ «Վրիպակ»)։ Հետևապէս՝ ես պատասխանատու եմ միայն 299 թվի նկատմամբ, որը ստացել եմ այսպէս.

1897— 98	ուս.	տարեշրջ.	եղել է	602	աշակ.
1898— 99	»	»	»	464	»
1899—900	»	»	»	441	»

Համեմատելով 1898 — 99 ուսում. տարեշրջանի աշակերտների թիւը 1897—98 ուսում. տարեշրջանի աշակերտների թվի հետ — կստանանք՝ 602 — 464 = 138 վերաս։

Համեմատելով 1899—900 ուսում. տարեշրջանի աշակերտների թիւը 1897—98 ուսում. տարեշրջանի աշակերտների թվի հետ — կստանանք՝ 602 — 441 = 161 վերաս։

Ապա՝ 138 + 161 = 299 վերաս։

Ը) Ես չեմ գրել՝ «համախօսականով պաշտօնապէս հրաժարել է» հոգաբարձութիւնը։ Պ. Գ. Անտոնեանի այդ նախադասութիւնն անմիտ է։ Եւ, եթէ կարելի է վիճել այն մասին, որ հոգաբարձութիւնն ինքն «իւր հրաժարականը ներկայացրել էր Վեհափառին», յամենայն դէպս ճիշտ է այն ակնարկս, որ պ.պ. Անտոնեան և ընկ., «Հանալով հասարակութեան համախօսականի շնորհիւ, այսպէս ասած, երկնային արձակուրդին իրենց պաշտօնից։

Է) Այդ «կէտ»-ում պ. Գ. Անտոնեանը շօշափում է «պապ-ի հարց»։ Նա կարծում է, որ, երբ հոգաբարձուն, հոգաբարձական պաշտօնական ժողովից

անմիջապէս յետոյ, Դպրանոցի ցանկապատում վայ է տալիս իր գլխին, որ աղնուութեամբ և անաչառութեամբ չի կատարել իր վրա առած պարտաւորութիւնները և գործել է անհամաձայն իր խղճին,— դա նշանակում է՝ «մառնա-ոչ խօսակցութիւնով» պարապել:

Ես այլ տեսակէտի եմ: Ինձ թւում է, որ, երբ Դպրանոցի պաշտօնեան պաշտօնական նիստից դուրս խոստովանում է, որ գործել է հակառակ իր խղճին, նա քաջոյապէս պարտաւոր է մնացեալ պաշտօնական նիստում բաւարարութիւն տալ իր խղճի պահանջին: Հակառակ դէպքում՝ նա այդ մնացեալ նիստում հանդիսանում է՝ իբր կրկնակի անքաջ-խիղճ պաշտօնեայ:

Ահա այդ պաշտօնական անբարեխղճութիւնն է, որ ես ի նկատի ունէի «Մի տեղեկագրի առթիւ» յօդուածումս:

Այո, պ. Գ. Անտօնեան, ոչ այն ամենը «մառնա-ոչ» է, ինչ որ ձե՛ղ ցանկալի է «մասնաւոր» հրատարակել, և դուք դեռ կունենաք առիթ համոզելու այդ քաջոյական ճշմարտութեան վերաբերեալ:

Ե՛ս ևս գիտեմ, որ դուք և ընկերներդ ծանրաբեռնուած էք «ոչպհական գործերով», և հէնց այդ ի նկատի առնելով՝ քանիցս, նոյն իսկ հոգաբարձական պաշտօնական ժողովներում, դիմել եմ ձեզ և ընկերներիդ՝ «Պարոննե՛ր, եթէ ժամանակ չունէք պարապելու Դպրանոցի գործերով, հրաժարուէք և տեղի տուէք աւելի ազատ մարդկանց»: Իսկ դուք և ընկերներդ, փոխանակ հեռանալու այդ առաջարկից, չկամեցաք իր ժամանակին բաժանուել «Թեմական

Դպրանոցի հոգաբարձու» տիտղոսից, ընդհակառակում էիք չյաձախել Դպրանոցը և հոգաբարձական պաշտօնական նիստերում դիմել Դպրանոցի տեսչին՝ «ի՞նչ կայ—ի՞նչ չկայ Դպրոցո-ՏՏ» հարցով[12]:

Ի վերջոյ, թէ օրքան «անդրէպի գրութիւն» էր նախկին «Մի տեղեկագրի առթիւ» յօդուածս—այդ հարցը դեռ քաջ է[13]. փակուած է միայն այն հարցը, թէ ունի՞ արդեօք պ. Գ. Անտօնեանն իրաւունք յայտարարելու՝ «սրանով վերջ եմ տալիս այսուհետև պ. Շահ-Նազարեանցի գրութիւններին»...

ԲԺ. ՍԻՄԷՕՆ ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ

19 $\frac{\text{XI}}{7}$ 00 թ.,

Մոսկուա:

---

[12]) Ց. Գ.. Շարունակ ականատես լինելով պ.պ. Գ. Անտօնեանի և ընկ. և՛ Դպրանոցի Տ. Նախագահ՝ Ներսէս արքեպիսկոպոս Խուդավերդեանի պաշտօնական սթափեցուցիչ անտարբերութեան (Հարկ է շեշտել, որ, ինչ և իցէ, պ. Գ. Անտօնեանն ամենագործունեան էր իր ընկերների մէջ)՝ ես մի անգամ անկարող եղայ զսպել բարոյական զայրոյթս և պատասխանեցի «ինչ կայ—ինչ չկայ Դպրոցում» հարցով ինձ դիմողին՝—«Ոչինչ չկայ»...

Ինձ նամանաւանդ վրդովեցնողն էր Ներսէս արքեպիսկոպոս Խուդավերդեանը: Զէ՞ որ վերջինս, շարունակ պարապարապ «ման գալով»—ինչպէս Կրիմցիք ասում են՝ «քալելով» առաջնորդարանի բակում, ամեն դիւրութիւն ունէր դէթ ամիսը մի անգամ անցնել առաջնորդարանի բակի շարունակութիւնը կազմող Դպրանոցի՝ բակը,—էլ չեմ ասում՝ փոքր ինչ հեռու էլ—Դպրանոցի դասարանները...

Այո՝ «երանի՜, հապա՜ր երանի մեր նախահայրերին»...

[13]) Տես ցածը՝ V.

V.

«Сундукъ съ бѣльемъ—да невѣста съ бѣльмомъ — Զամբիւղը լիքն է—սակայն հարսի աչքը հատով է»...

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԾ:

Errare humanum est — *սխալուելը մարդկային յատկութիւն է!...*

Նեւասիս՝ վերը յիշեալ ըստ պ. Գ. Անտոնեանի՝ «անդէղի», զրուցիւնների հետեւանքն էր.

Երեւանի Հ. Թ. Հ. Դպրանոցի հոգաբարձութիւնը՝ ուշի ուշով զննելով Դպրանոցի 1897 — 1900 թ.թ. «Մատեաններ»-ը և համեմատելով այն պ. Գ. Անտոնեանի արձանագրածի հետ՝ գտաւ, որ Դպրանոցի դրամարկղում չկար՝ պակաս կայ, որ այդ պակասը, ըստ Դպրանոցի «Մատեաններ»-ին, կազմում է 280 ր. 43 կ.[14]*, և 1900 թուի դեկտեմբերի 14-ին պաշտօնապէս հրաւիրեց պ. Գ. Անտոնեանին լրացնել այդ պակասը:*

Պ. Գ. Անտոնեանը, գրքերի եօթն ամիս ձգձգելուց և «չեմ-չու�»-ի դիմելուց յետոյ[14]*), այնու ամենայնիւ, համաձայն կրկնակի պաշտօնական հրաւէրին, 1901 թուի յուլիսին պարտաւորուած եղաւ վճարել Դպրանոցի դրամարկղի պակասը: Եւ նա վճարեց այդ պակասի դիւանդիկը, և ոչ, ինչպէս այնքան խրոխտաբար խոստացել էր, «կրկնադիւանդիկը և եռադիւանդիկը»*[15]*)...*

Այդ հանգամանքի ըստ արժանոյն գնահատութիւնը թողնում եմ ընթերցողիս...

Սակայն այստեղ իսկ անկարելի է անտես առնել ինքն իրեն շեշտող հետեւեալ հարցը՝

Պ. Գ. Անտոնեանը՝ շարունակ ամիսներ—դէ ամբողջ տարուայ—ելի (1900 թ. յունիսի 5-ից[16]*)—ց 1901 թ. յուլիսի վերջերը)—իր խանութի կասայում պահելով «ժողովրդի կոպեկներից» կազմուած դպրոցապատկան գումարը՝ չէ՞ որ պարտաւոր էր*

---

[14]) *Ես հաշուել էի՝ ըստ պ. Գ. Անտոնեանի «Համառօտ տեղեկագրի», և գտել էի պակաս՝ 345 ր. 15 կ.։ Հոգաբարձութիւնը գտել է 280 ր. 43 կ. պակասը՝ համեմատելով-զննելով Դպրանոցի յիշածս 1897—1900 թուերի պաշտօնական «Մատեաններ»-ը, և ո՛չ՝ պ. Գ. Անտոնեանի մի շարք սխալներ պարունակող «Համառօտ տեղեկագիր»-ը, որը՝ նոյն իսկ ըստ պ. Գ. Անտոնեանի՝ «դոկումենտ» չի: Ուրեմն՝*

ա) Ի՞նչ անուն տանք պ. Գ. Անտոնեանի և ընկ. Հոգաբարձութեանը, որն «իւրաքանչիւր ամսի վերջը քննում էր և վաւերացնում էր գանձապահ-Հոգաբարձու պ. Գ. Անտոնեանի հաշուեմատեանը» («Համառօտ տեղեկագիր», էջ 12)....

բ) Ի՞նչպէս հասկանանք պ. Գ. Անտոնեան—պաշտօնեայի պաշտօնական «Մատեաններ»-ի «սխալներ»-ը...

[15]) *Տես վերը, էջ՝ 17 (պ. Գ. Անտոնեանի նամակը).*

[16]) *Այդ ժամանակ Դպրանոցի հոգաբարձութիւնն արդէն արձակուած է լինում և նրան յաջորդում է, յուլիսին, Դպրանոցի նոր հոգաբարձութիւնը (Տես վերը, էջ՝ 25 և 27).*

Զնայելով վերը շեշտուած 1900 թուի դեկտեմբերի 14-ի պաշտօնական հրաւէրին՝ դեռ 1901 թուի մայիսի 6-ին «Մշակ»-ում շեշտւում է՝

«Տարց՝ թէ ինչո՞ւ Երեւանի թեմական դպրոցի նախկին հոգաբարձու Գէորգ Անտոնեանը հաշիւները չէ յանձնում նոր հոգաբարձութեան». [«Մշակ», 1901 թ., № 97 (մայիսի 6)՝ «Մանրանկար»]...

շահեցնելայդ գո-մարը՝ յօգո-ց Դպրանոցի [17]: Հետևապէս՝ հետաքրքրելի է — «՞-ը ընդ-եց դպրոցապան-կան գո-մարի %-ը [18]...

Ապա՝

Եթէ նոյն իսկ ընդունելու լինենք, որ «Ուսուցչաց ռոճկադրամ»-ի հարցը (Տես վերը՝ էջ 8՝ Ե) փակուած է՝ շնորհիւ ինչ-ինչ «Ա այլ-ներդի (Տես վերը՝ էջ 23—25), այնու ամենայնիւ ցայսօր դեռ քաց են մնա-մ ա-ալին փոխա-ո-ինեան 15688/49 պոմակի լ-անալը- (Տես վերը՝ էջ 8, 15, 22) և 100 ր-ելանոց ոսկէ ժամացոյցի (Տես վերը՝ էջ 8—9, 25—26) հարցերը ևս...

Ց-ալով որ կեղծիքը չի յանդգնի պիրանալ պաշ-պօնական ապոյգ փաստերին, — սպասե՛նք Դպրանոցի ապագայ պատմագրի անաչառ դատաստանին...

19 $\frac{\text{XI}}{25}$ 02 թ.,

Մոսկուա:

---

[17]) «Զմնացորդն ի գումարաց յաւարտ ամին պարտաւորի հոգաբարձութիւնն տալ յաճումն տոկոսեաք օրինաւոր գրաւականաւ հաւատարիմ անձանց» (Տես «1837—1887 Յիսնամեակ հայոց հոգևոր Թեմական Դպրանոցի Երևանայ», Տփխիս, 1888 թ., էջ 311՝ 18 1/31 65 թուի՝ «վշտալի» Մատթէոս Կաթողիկոսից հաստատուած՝ «Կանոնադրութիւն յաղագս կառավարութեան ազգային հոգևոր Դպրանոցի հայոց Երևանայ», § 22):

[18]) Շատ է այդ %-ը թէ՛ քիչ—այդ՝ «նիւթական նեղ դրութեան» («Համառօտ տեղեկագիր», էջ 5) մէջ խարխափող Դպրանոցի դրամարկղի և՝ հասարակաց սկզբունքի տեսակէտից՝ մի և նոյն է,—նամանաւանդ որ այդ նոյնը շեշտում է Դպրանոցի պաշտօնական նիստ ու կացը ղեկավարող «Կանոնադրութիւն»-ը ևս (Տես ծանօթ. 17):

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

«Ազգային գրադարան»
NL0229943

51.835